«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքները

Առարկան՝ Կենսաբանություն
Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Ավդալյան

Ուսումնական հաստատություն՝ Լևոն Շանթի անվ, հ.4 հիմական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն..... 3
Հասկացողություն բարոյական զգացմունքների մասին 5
Դեռահաս տարիքի հոգեբանական առանձնահատկությունները..... 13
Բարոյական նորմերի, բարոյական զգացմունքների առանձնահատկությունները դեռահաս տարիքում: 19
Եզրակացություն..... 22
Գրականության ցանկ..... 24

Ներածություն

Մարդու վարքը, գործունեությունը և կեցությունն ընդհանրապես մեծապես պայմանավորված են նրա նախընտրած արժեքներով, արժեքային կողմնորոշմամբ: Բարոյական արժեքները կազմում են մարդու արժեհամակարգի նշանակալի մասը: Բարու, արդարի, հայրենասիրության և բարոյական այլ արժեքների նկատմամբ մարդու վերաբերմունքով է պայմանավորված անձի, հասարակության, պետության ներդաշնակ կենսագործունեությունը, ինչն առավել էական է դառնում քաղաքական, տնտեսական, մշակութային ազատությունների, գլոբալացման և մարդկանց ազատ տեղաշարժերին ու ազատ ընտրության իրականացմանը նպաստող այլ գործոնների առկայության շնորհիվ: Ասվածը ցույց է տալիս բարոյական արժեքների ձևավորման խնդրի կարևորությունը: Բարոյական արժեքների ձևավորումը սկսվում է երեխայի ծնվելու հետ միաժամանակ և իրականացվում նրա ողջ կյանքի ընթացքում: Այդ գործընթացին մասնակցում են ընտանիքը, միջավայրը, եկեղեցին, տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաները և, իհարկե, երեխաների դաստիարկության հիմնական օղակը՝ հանրակրթական դպրոցը: Վերջին շրջանում զգալիորեն մեծացել է սովորողների բարոյական արժեքների ձևավորման, բարոյական դաստիարակության խնդրի նկատմամբ ուշադրությունը. կատարվում են գիտական հետազոտություններ, կրթօջախների ուսումնական պլաններում ներառվում են բարոյագիտական բնույթի ուսումնական դասընթացներ, ստեղծվում են հիմնադրամներ և հասարակական կազմակերպություններ: Բավական ընդգրկուն են նմանատիպ աշխատանքների իրականացման աշխարհագրական, կրոնական ու մշակութային շրջանակները:

Աշխատանքի նպատակն է սովորողներին ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել հայ պատանու բարոյափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորմանը:

Դասընթացի հիմնական խնդիրներն են՝

ա) Սովորողներին ծանոթացնել.

- բարոյագիտության հիմնական հասկացություններին (կատեգորիաներ), բարոյական առաջընթացի էությանն ու չափանիշներին,
- բարոյականության էությանը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկությանը, գործառույթներին
- բարոյականության և ազատության հարաբերությանը
- ազգային ու համամարդկային բարոյամշակութային արժեքներին, բարոյական արժեհամակարգին, բ) ցույց տալ ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին, գ) նպաստել անձի բարոյական մտահաղորդակցության ձևավորմանը դ) բացահայտել բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից, ե) վերլուծել բարոյականություն հասկացության տարբեր սոցիալմշակութային մեկնաբանությունները:

Հասկացողություն բարոյական զգացմունքների մասին

Բարոյական զգացմունքները ծագում ու զարգանում են մարդկանց համատեղ գործունեության ընթացքում, նրանք պայմանավորված են նաև բարոյական նորմաներով:

Բարոյական զգացմունքներին են պատկանում ընկերության ու բարեկամության, կոլեկտիվիզմի և հայրենասիրության, պարտքի և խղճի զգացմունքները:

Բարոյական զգացմունքների աղբյուրը հասարակական կեցությունն է: Այդ զգացմունքները պայմանավորված են աշխարհայացքով՝ մարդու հայացքների ու համոզմունքների համակարգով: Բարոյական զգացմունքները ծնվում են մարդկային հարաբերությունների համակարգից և այդ հարաբերությունները կարգավորող էթիկական նորմաներից:

Բարոյական զգացմունքների առաջին առանձնահատկությունը նրանց մեջ, հատկապես վառ կերպով և անմիջականորեն արտահայտված սոցիալական բնույթն է:

Երկրորդ առանձնահատկությունը բարոյական զգացմունքների դրսևորման բարդությունն ու բազմակողմանիությունն է: Հայրենասիրության զգացմունքը դրսևորում է հայրենիքի նկատմամբ անսահման սիրո մեջ, ինչպես և նրա թշնամիների, այն ամենի նկատմամբ ատելության զգացմունքով, ինչ խանգարում է նրա հետագա զարգացմանն ու բարգավաճմանը: Հայրենասիրությունն արտահայտում է հայրենիքի նկատմամբ թախիծի ու կարոտի ծանր ապրումներում, որոնք մաշում են այն մարդկանց հոգիները ովքեր օբյեկտիվ հանգամանքների բերումով ստիպված են ապրել նրա սահմաններից դուրս: Հայրենասիրությունն արտահայտվում է իր հայրենիքի համար հպարտության զգացմունք, այդ զգացմունքը դրսևորվում է նաև հայրենի բնության նկատմամբ ունեցած սիրո մեջ: Հպարտության զգացմունքն էլ բազմակողմանի է իր դրսևորում- ներում: Այն հանդես է գալիս բարոյական պատասխանատվության ապրումներում հանձնարարված գործը պատշաճորեն կատարելու համար մտահոգվածության ու անհանգստության զգացմունքներում, բավարարվածության ապրումներ է պատճառում գործը հաջողությամբ ավարտելուց:

Բարոյական զգացմունքների մյուս առանձնահատկությունը նրանց գործուն, ակտիվ, վառ կերպով դրսևորված ստենիկ բնույթն է: Նրանք ի հայտ են գալիս ոչ միայն մտորումներում ու ապրումներում, այլև ամենից առաջ մարդու ակտիվ գործունեության մեջ: Այդ զգացմունքներն ի հայտ են գալիս այն գործունեության մեջ, որով մարդը տալիս է իր բոլոր ուժերը, ամբողջ էներգիան, ձգտումները՝ հասնելու լավագույն արդյունքների և որպես սոցիալիստական հայրենիքի քաղաքացի, հաջողությամբ լուծելու իր առաջ դրված խնդիրները:

Շոտլանդիայում ոչ կրոնական դպրոցների համար պարտադիր է «Կրոնական և բարոյական կրթություն» ուսումնական առարկան, որն ուսուցանվում է սկզբնական դպրոցի I-VII և միջնակարգ դպրոցի I-III դասարաններում: Առարկայական չափորոշիչներով հիմնական խնդիրների շարքում նախատեսվում են նաև սովորողների կարեկցանքի, իմաստության, արադարության և ազնվության մասին գիտելիքների խորացումը և բարոյական այդ արժեքների ձևավորումը[1]:

Բարոյական զգացմունքները խիզախ ու հերոսական արարքներ կատարելու ներքին դրդապատճառներ են: Մարդու առաջատար բարոյական սկզբունքներից մեկը պարտքի զգացումն է: Հայրենիքի նկատմամբ պարտքի զգացմունքը, որ զարգացման բարձրագույն աստիճանին է հասել սովետական հայրենասերների մոտ, դրդապատճառ է, որպեսզի սովետական մարդիկ գիտակցաբար իրենց կյանքը ենթարկեն մահաբեր վտանգի, գիտակցաբար զոհաբերեն իրենց կյանքը հանուն հայրենիքի:

Անձի հոգեկան կերպարում բարոյական կողմին առաջնակարգ տեղ է պատկանում: Ոչինչ այնքան չի բնորոշում ու բնութագրում մարդուն, որքան նրա բարոյական հատկանիշները, քանի որ նրանց սոցիալական նշանակությունը բացառիկ մեծ է:

Բարձրակարգ զգացմունքների ոլորտում առանձնահատուկ տեղ են գրավում բարոյական զգացմունքները: Այսպիսի զգացմունքների վեհ բնույթը արտահայտելու համար հայրենիքի նկատմամբ սերը անվանում են սուրբ , բարեկամական զգացմունքը՝ ազնիվ,պարտքի զգացմունքը՝ բարոյական վեհություն:

[1] http://www.educationscotland.gov.uk/Images/CurriculumImpactReviewRME_tcm4-826574.pdf, p. 6.

Բարոյական զգացմունքները, որպես ապրումներ առաջանում են ուրիշ մարդկանց և սեփական վարքի ու արարքի ազդեցությամբ: Այդ ապրումները արարքի յուրօրինակ գնահատման, բարոյական նորմաների հետ դրանց համապատասխանության ու անհամապատասխանության հետևանք են, արարքներ, որոնք մարդ պարտադիր է համարում իր և ուրիշների համար: ՈՒրիշների արարքը դրական գնահատելիս մարդը ապրում է գոհունակության զգացմունք, բացասականի դեպքում՝ ներքին բողոք:

Մարդկանց կյանքի և գործունեության մեջ առաջանում են փոխօգնության, համագործակցության, ձգտումների և շահերի ընդհանրության վրա հիմնված ընկերական փոխհարաբերություններ:

Ընկերականության զգացմունքների զարգացման մեջ վճռական նշանակություն ունի դեպի աշխատանքն ունեցած կոմունիստական վերաբերմունքը, իսկ դրա հետ մեկտեղ կոլեկտիվիզմը՝ առաջադեմ աշխատավոր մարդու բարոյա-հոգեբանական առանձնահատկությունը, որը հակադիր է անձի անհատապաշտական մեկուսացմանը հասկացությունից, խորթ է անձնական շահորը հասարակականին հակադրելուն:

Ընկերականությանզգացմունքների բարձրագույն արտահայտունը բարեկամության զգացմունքն է: Բարեկամությունը չի հանգում զուտ փոխօգնությանը, աջակցմանը, շահերի ընդհանրությանը, չնայած, որ չի կարող գոյություն ունենալ առանց այդ պայմանների: Բարեկամության զգացմունքը դրսևորվում է դեպի ընկերը ունեցած կապվածության, նրան տեսնելու, նրա հետ խոսելու, իր մտքերը և զգացմունքները նրա հետ կիսելու պահանջմունքի մեջ: Բարեկամության իսկական զգացմունքը կապված է դեպի ընկերը ունեցած բարձր պահանջկոտության հետ: Հենց դրանով, այլ ոչ թե սխալների փոխադարձ ներմամբ և դրսևորում փոխօգնությունը բարեկամության մեջ:

Բարեկամությանը մոտ, բարոյական կարևոր զգացմունք է հանդիսանում սերը: Սերը տղամարդու և կնոջ մեջ որպես զգացմունք իր ֆիզիոլոգիական հիմքով ունի ոչ միայն տահմ շարունակելու անպայմանական ռեֆլեքսներ, այլ նաև պայմանական կապերի բարդ համակարգեր, որոնցում ամրապնդված է միջմարդկային հարաբերությունների փորձը (սովորույթներ, ճաշակներ, հետաքրքրություններ,

բարքեր, համոզմունքներ և այլն): Հենց այդ էլ դառնում է մարդկանց կողմից սիրո զգացմունքների ապրման տարբերությունների հիմնական պատճառը: Հասարակական հարաբերությունները, որոնցում առաջանում և դրսևորվում է սիրո զգացումը, իրենց կնիքն են դնում մարդու բոլոր ապրումների, այդ թվում նաև սիրո զգացմունքների ապրման վրա: Սերը համարվում է ամուսնության և ընտանիքի բարոյա-հոգեբանական հիմքը:

Մարդկանց սերը բնորոշվում է այն ուրախությամբ, որ պարգևում են սիրած մարդու հետ մերձավորությունն ու բարեկամությունը, կյանքի մասին հայացքների, հետաքրքրությունների, ճաշակների ընդհանրությունը, ողջ կյանքում միությունը նրա հետ: Իսկական սերը ոչ թե թռուցիկ հրապուրվածություն է, այլ խորը և լուրջ զգացմունք: Հոգեբանության մեջ սերը հանդես չի գալիս որպես արգելք մարդու և հասարակության միջև: Հոգեբանության մեջ սիրով միացած ընտանիքը իր շահերը չի հակադրում պետության շահերին: Ըստ էության այդ զգացմունքները համընկնում են: Այդ պատճառով մեզ մոտ հիմքեր չկան ընտանեկան եսասիրության զարգացման համար:

Սիրո իսկական զգացմունքը առաջացնում է մարդու մտավոր և ֆիզիկական ուժերի ակտիվացում, ստեղծագործական վերելք: Մարդու իսկական սերը ոչ թե պասիվություն, սեփական ապրումների աշխարհում պարփակվել պետք է առաջ բերի, այլ արթնացնի գործնականություն և եռանդ:

Երբ մարդ ինքն իրեն է ներկայացնում բարոյական որոշակի պահանջներ, ապա խասում են նրա խղճի ձայնի մասին:

Խղճի ձայնը առանձնապես զգալի է դառնում, երբ մարդը այս կամ այն պատճառով ակամայից խախտում է բարոյական այն նորմաները, որը իր համար համարում է պարտադիր: Նման դեպքերում մարդը ապրում է խղճի տառապանքներ:

Խիղճը հուզականորեն ղոր ապրումներով բարոյական ինքնագնահատումն է : Խիղճը անձի բարոյական կողմի յուրօրինակ ֆունկցիան է, մարդու բարոյական ինքնագիտակցման արտահայտությունը:

Մաքուր խղճով մարդիկ բարձր բարոյականությամբ, բարձր զարգացած հասարակական պարտքի ու կոլեկտիվիզմի զգացմունքներով մարդիկ են: Նրանց համար բարոյական նորմաները գործունեության ուղեցույց են:

Բարոյականությունը, որ արմատապես տարբերվում է բուրժուականից, որոշում է սոցիալիստական հասարակարգի քաղաքացու բարոյական վարքը: Կոմունիզմի բարոյական կոդեքսը սոցիալիստական հասարակության կյանքի բարոյական այն սկզբունքների արտահայտությունն է, որոնք ավելի ու ավելի են պայմանավորում նոր կյանքի կառուցողների հոգեկան կերպարն ու բարոյական զգացմունքները:

Բարոյական դաստիարակությունը սերտորեն կապված է դաստիարակության մյուս բաղադրամասերի հետ և մեծ դեր է խաղում անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար: Նրա հիմնական էությունը անձի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումն է: Այս երկու հասկացությունները փոխկապակցված են և ունեն նույն իմաստը: Եթե մարդն ունի բարոյական դաստիարակվածություն, ապա դա նշանակում է, որ նաև բարոյապես զարգացած է և հակառակը: Այդ հասկացությունները ոչ միայն ձողկապակցված են ու փոխմիասնական, այլ նաև փոխկախված են, այսինքն՝ բարոյական զարգացումը կախում ունի բարոյական դաստիարակվածությունից, իսկ վերջինս էլ՝ բարոյական զարգացումից:

Առանձնացվում են բարոյական 16 հիմնական արժեքներ, որոնք պետք է պարտադիր ուսուցանվեն կամ անուղղակիորեն ձևավորվեն դպրոցի բոլոր ուսումնական առարկաների միջոցով: Դրանք են՝ կարեկցանքը, ինքնավստահությունը, համեստությունը, հարգանքը, սերը, արդարությունը, ազատությունը, քաջությունը, մտավոր և ֆիզիկական մաքրությունը, ազնվությունը, աշխատասիրությունը, համագործակցությունը, զսպվածությունը, երախտագիտությունը, մտավոր կարողությունները և հասարակական գիտակցությունը:[2]

Մարդու (տվյալ դեպքում դպրոցականի) բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումը կախում ունեն տվյալ երկրի սոցիալական պայմաններից, այն հանրությունից, որում նա ապրում և գործում է: Եթե դրանք իրենց բարձրության վրա չեն գտնվում, եթե չկան համապատասխան նյութական, բարոյահոգեբանական նպաստավոր պայմաններ, քաղաքական առողջ մթնոլորտ, քաղաքակրթություն,

[2] Chang Lee Hoon. Revisiting the Values in Moral Education for Malaysian schools, Journal of Research, Policy & Practice of Teachers and Teacher Education, Vol. 3, No. 2, December 2013, p. 51

ապա այնտեղ անձի բարոյականությունն ու բարոյական զարգացումը կայուն լինել չեն կարող:

Բարոյական դաստիարակության նպատակը անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է: Մարդու բարոյական զարգացումը շարունակվում է նրա ամբողջ կյանքի ընթացքում: Բարոյական զարգացմանը նպաստում են ուրիշ մարդկանց, հասարակության հետ անձի շփումները, հաղորդակցումները, որոնք անառարկելիորեն ներգործում են նրա գործողությունների, արարքների վրա, ձևավորում նրա անձը: Բարոյական դաստիարակության գերագույն նպատակը ոչ միայն անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է, այլ նաև նրա կարևորագույն գործառնությունն է հասարակությանը այնպիսի մարդու հավելումը, որը շարունակի յուրացնել հասարակության կողմից ընդունված նորմերը, բարոյական որակները, մշտապես կատարի բարոյական գործողություններ ու արարքներ՝ հօգուտ հասարակության և հօգուտ մարդու, անի այն, ինչը համամարդկային է ու արժեքավոր:

Բարոյական զարգացում ունեցող մարդը կոռեկտ է, պարկեշտ, առաքինի, բարեկիրթ: Այսպիսի մարդու նիստն ու կացը, գործողությունները ու արարքները, մարդկանց հետ հարաբերությունները, ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը յուրահատուկ են և օրինակելի:

Բարոյական զարգացումից զուրկ մարդը շրջապատի հասարակության համար անտանելի «բեռ» է: Կ. Դ. Ուշինսկին բարոյական զարգացումն ավելի բարձր էր գնահատում, քան մտավոր զարգացումը: Իր հոդվածներից մեկում գրում է, որ բուսական աշխարհի մասին իմացությունը չի կարող Գոգոլի չինովնիկներին ուղղել, հասարակության համար նրանց դարձնել պիտանի մարդիկ: Ընդհանրացնելով վերը շարադրածները, կարելի է ասել՝ բարոյական դաստիարակության վերջնական նպատակը մարդուց իսկական մարդու կատարելատիպի ձևավորումն է, այնպիսի մարդու, որին Շեքսպիրը կասեր.«Ինչ հրաշալի է մարդը՝ հրաշքների հրաշքը…»:

Բարոյականությունը շատ բարդ հասկացություն է. դրա էությունը լավ հասկանալու համար պահանջ է զգացվում այն շերտավորել, բաժանել մասերի ու գտնել այն եզակին, որը կարող է արտահայտել ամբողջի բովանդակությունը:

Պարզվում է, որ այդպիսի եզակին արարքն է: Ուրեմն կարելի է ասել՝ մարդու բարոյականության մասին դատում են նրա արարքներով: Ի՞նչ է արարքը:

Արարքը գործողություն է: Նշանակում է՝ մարդու արարքն արտահայտվում է ինչ-որ գործողությունում: Սակայն գործողությունը դեռևս արարք չէ, քանի որ գործողության իմաստը, որը նրա ներքին կողմն է, մեզ հայտնի չէ: Հայտնի է միայն արտաքին կողմը: Օրինակ՝ մարդը կտրում է ծառը: Սա տվյալ գործողության արտաքին կողմն է, իսկ թե ինչու է կտրու ծառը՝ մեզ հայտնի չէ: Այսինքն՝ հայտնի չէ գործողության ներքին կաղմը կամ կտրելու իմաստը:

Արարքն այն գործողությունն է, որի արտաքին և ներքին իմաստները բացահայտվում են: Արարքի իմաստը բնորոշվում է այն կատարող մարդուն, նրա բարոյական զարգացման մակարդակը:

Բերված օրինակում առկա են արարքի և նպատակը, և դրդապատճառները, և պայմանները: Այնուհետև, այդ օրինակը հաստատում է, որ յուրաքանչյուր արարքում (դրական և բացասական) առանձնանում է երկու բաղադրիչ. ա) արարքի արտաքին կողմը, որի իմաստը հայտնի է և բ) ներքին կողմը, որի իմաստը հայտնի չէ: Արարքի ներքին կողմը արարքի իմաստն է, նպատակը:

Արարքի մասին շարադրանքից կարելի է եզրակացնել, որ մարդու արարքների գումարից կամ դրանց ամբողջությունից ձևավորվում է նրա վարքը, որը տվյալ հասարակության մեջ գործող պահանջների ու նորմերի իմացության աստիճանն է և կիրառումը տվյալ անձնավորության կողմից: Այս դեպքում նման վարքը կարելի է անվանել վարքի կուլտուրա: Վարքի ու վարքագծի հիմքը արարքն է:

Դաստիարակի խնդրիը պետք է լինի դրական արարքների կատարումը դարձնել դպրոցականի մշտական սովորույթը, նրա բնավորության կայուն գիծը, որպեսզի նա ամբաղջ կյանքում կատարի միայն ու միայն դրական արարքներ և դրանց հիման վրա ձևավորի իր վարքի կուլտուրան, իր բնավորությունը:

Բարոյական դաստիարակության խնդիրները բազմազան են և բազմաբնույթ: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ են դասվում անձի գիտակցության, զգացմունքների ու վարքի ձևավորումը: Երկրորդ խմբի մեջ են մտնում բարոյական բարձր որակները. հայրենասիրությունը, ինտերնացիոնալիզմը,

հումանիզմը, կոլեկտիվիզմը, գիտակցական կարգապահությունը, քաղաքացիական դաստիարակությունը և այլն:

Բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումը ենթադրում են դրանք իրագործել ըստ տարիքային հնարավորությունների: Ականավոր հոգեբան Լ. Ս. Վիգոտսկին գտնում էր որ յուրաքանչյուր տարիքում ծագում է անձի զարգացումը պայմանավորող հանգամանքների ամբողջություն՝ զարգացման սոցիալական իմաստով: Ելնելով այդ սկզբունքից, պետք է իմանալ, թե կրտսեր, դեռահասության, պատանեկության կոնկրետ տարիքներում բարոյական ինչ որակներ, նորմեր ներարկել նրանց մեջ: Իսկ դրա համար՝ դրանցից յուրաքանչյուրում, պետք է գտնել բարոյական զարգացման առանցքը կամ հիմքը:

Դեռահասությանտարիքում երեխան ամենուր է (տուն, դպրոց, բակ, թաղամաս, հասակակիցների միջավայր, շրջապատ և այլն): Ահա այս հանգամանքն էլ նպաստում է ձեռք բերելու մերձավոր շրջապատի միջավայրը յուրացնելու փորձ: Այդ փորձը դեռահասը յուրացնում է իր դասարանում, իրենց բակում, այն թաղամասում, ուր բնակվում է, ում հետ խաղում է, ընկերություն անում, շփվում, հաղորդակցվում, ամուր կապեր, հարաբերություններ հաստատում: Այն ամենը նրա մեջ առաջացնում են ինքնահաստատման պահանջմունք: Միայն այդ չէ: Դեռահասը դառնում է յուրօրինակ հատաքրքրասեր՝ առաջին հերթին իրեն շրջապատող մարդկանց նկատմամբ: Նրանց մեջ հայտնաբերում է այնպիսի որակներ, որոնք ինքը չունի: Ուստի կողմնորոշվում է դեպի նրանց օրինակը: Իր համար որոնում է իդեալ: Նրան թվում է, թէ ինքն արդեն կարող ուժ է: Ինքնավստահությունը նրա մեջ խոր արմատներ է ձգում: Այս տարիքում դաստիարակը իր սանին կողմնորոշում է բոլոր արարքներում: Ապա օգնում է նրան՝ յուրացնելու բարոյական զարգացմանն ու բարոյական հասկացություններին վերաբերող գիտելիքներ, դրանք դարձնում նրա համոզմունքները: Նրա համար մշակում է ինքնադաստիարակության ծրագիր: Խորհուրդներ ու ցուցումներ է տալիս դեռահասին, թե ինչպես կիրառել և իրացնել այդ ծրագիրը:

Դեռահաս տարիքի հոգեբանական առանձնահատկությունները

Դեռահասության փուլի սահմանները մոտավորապես համընկնում են միջնակարգ դպրոցի 5-8-րդ դասարանների հետ և ընդգրկում են 11-12 տարեկանից մինչև 14-15 տարեկանը:

Երեխայի զարգացման պրոցեսում դեռահասության փուլի առանձնահատուկ տեղը իր արտահայտությունն է գտել նրա այլ անվաններում. «անցման», «դժվար» կամ «ճգնաժամային» շրջան: Սրանցում ընդգրկված է այդ շրջանում տեղի ունեցող զարգացման պրոցեսների բարդությունն ու կարևորությունը, որոնք կապված են կյանքի մեկ փուլից մյուսն անցնելու հետ: Մանկությունից հասունությունը կատարվող անցումը այդ փուլում տեղի ունեցող զարգացման բոլոր՝ ֆիզիկական, մտավոր, բարոյական և սոցիալական կողմերի հիմնական բովանդակությունն է և առանձնահատկությունը:

Դեռահասի աննավորության զարգացման առաջին գործոնը հենց իր հասարակական մեծ ակտիվությունն է: Սրա նպատակն է վարքի որոշակի նմուշների և արժեքների յուրացումը, չափահասների ու ընկերների հետ հարաբերությունների հաստատումը: Այդ ակտիվության օբյեկտ է նաև ինքը՝ դեռահասը: Նա ծրագրավորում է իր անձն ու ապագան և փորձ է կատարում իրականացնել իր մտադրությունները, նպատակներն ու խնդիրները:

Դեռահասների հասունացման ընդհանուր ուղղությունը կարող է տարբեր լինել, իսկ ուղղություններից յուրաքանչյուրն էլ կարող է շատ տարբերակներ ունենալ: Օրինակ, «մտավորականներից» մեկի համար գրքերն ու գիտելիքները կյանքում կարող են գլխավորը լինել, բայց մնացած տեսակետներից նա կարող է «մանուկ» լինել: Դասարանի «մտավորականներից» մեկ ուրիշը տանը կարող է էլեկտրոնիկայի վերաբերյալ հաղվածներ կարդալ և հափշտակված լինել ռադիոտեխնիկայով, բայց դասերի ժամանակ կարող է անգործության մատնվել, չափից ավելի հոգ տանել իր արտաքին տեսքի մոդայիկ լինելու մասին: Նա ամենից ավելի բարձր կարող է գնահատել իրենից ավելի նասուն տղաների հետ շփվելը, որոնց հետ կարելի է խոսել ամեն ինչի մասին՝ սկսած կյանքի իմաստից մինչև լավագույն վարսավիրանոցը: Երրորդ «մտավորականին» հասունության արտաքին դրսևորումները կարող են

առանձնապես չհրապուրել, բայց նա իրենում կարող է եռանդուն կերպով այրական որակներ դաստիարակել և, միաժամանակ, աղջիկների շրջապատում իրեն պահել, նրանց կարծիքով, երեխայի նման, քաշել փաղկապից, խառնել սանրվածքը: Բոլոր այդ երեք տարբերակներում, որոնք նման են ըստ մեկ հիմնական պարամետրի, հասունության զարգացումը տարբեր կերպ է ընթանում և ձևավորվում են տարբեր բովանդակություն ունեցող կենսական արժեքներ: Դեռահասության փուլը կարևոր է նրանով, որ այստեղ դրվում է անձի բարոյական ու սոցիալական դիրքորոշումների հիմքը և ուրվագծում է դրանց հետագա զարգացման հիմնական ուղղությունը:

Դեռահասության փուլը ընդունված է համարել դժվարին ու ճգնաժամային:

Դեռահասության տարիքի հոգեբանական կարևորագույն բնութագիրը անձնավորության ինտենսիվ բարոյական ձևավորումն է, բարոյական գիտակցության ձևավորումը, վարքի բարոյա-էթիկական նորմաներիտիրապետումը: Դեռահաս տարիքը աշխարհայացքի, բարոյական համոզմունքների, սկզբունքների ու իդեալների, գնահատման դատողությունների ձևավոման տարիք է, որոնցով դեռահասն սկսում է ղեկավարվել րի վարքում: Եթե կրտսեր դպրոցական տարիքում նա գործել է կամ մեծերի՝ ուսուցիչների և ծնողների անմիջական ցուցումով, կամ իր պատահական ու իմպուլսիվ մղումների ազդեցությամբ, ապա այժմ նրա համար հիմնական նշանակություն են ստանում վարքի սեփական սկզբունքները, սեփական հայացքներն ու համոզմունքները:

Ուսուցիչը, դաստիարակը պետք է նկատի ունենա, որ հենց այս տարիքում են դրվում բարոյական գիտակցության հիմքերը: Նայած այն բանին, թէ ինչպիսի բարոյական փորձ է ձեռք բերում դեռահասը, ինչպիսի բարոյական գործունեություն ունի նա, ըստ այնմ էլ ձևավորի նրա անձնավորությունը:

Ուսուցչի գործունեության ընթացքում բացասական բարոյական որակներից մեկը, այսպես կոչված, կրկնակի անարդարության դրսևորումն է: Այն տեղի է ունենում, երբ ինչ-որ մեկը պարտավորություններ է վերցնում մյուսի հանդեպ և ոչ միայն խախտում է դրանք, այլև այդ պարտավորությունների հետ իրեն տրված արտոնություններն ու դիրքը օգտագործելով՝ մյուսին վնասում է հենց այն բանում, ինչից ինքը պետք է զերծ պահեր նրան: Ա. Շոպենհաուերը կրկնակի անարդարություն է համարում, երբ սպանությունը իրականացնում է թիկնապահը,

երբ գողությունը կատարում է պահակը, կամ խնամակալը յուրացնում է իրեն վստահված սեփականությունը, երբ դատավորը կաշառվում է, և այլն[3]:

Բայց հենց այն պատճառով, որ այդ տարիքը ինտեսիվ բարոյական զարգացման տարիք է, պետք է հիշել, որ երբեմն դեռահասի գիտակցության մեջ կարող են ձևավորվել բարոյական հասկացություններ, որոնք հակասում են այն հասկացություններին և համոզմունքներին, որոնք դաստիարակը կուզենար արմատավորել դպրոցականի գիտակցության մեջ:

Դեռահասի մեջ է ձևավորվում բարոյական համոզմունքների որոշակի համակարգը, այդ թվում նաև վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ: Ոմանք գտնում են, որ աշխատանքով կարելի է պատժելև ձգտում են հաստատել այդ բնույթը: Սակայն դեռահասը, որի մեջ իսկապես սկսում է ձևավորվել հարաբերությունը մարդկանց և աշխատանքի նկատմամբ, փորձում է հասկանալ հետևյալը. իր բարոյական փորձից նա գիտե, որ մեծերը երբեք որևէ լավ բանով չեն պատժում: Եթե պատժում են, ապա ինչ-որ անհաճո բանով: Եթե աշխատանքով են պատժում, ապա դեռահասի գիտակցության մեջ կազմավորվում է որոշակի պատկերացում՝ աշխատանքը ինչ-որ տհաճ, տանջալից բան է: Մենք գտնում ենք, որ գիտակցության մեջ պետք է արմատավորել պատկերացում այն մասին, որ աշխատանքը պատվի, փառքի, արիության և հերոսության գործ է: Սակայն այս բառերը կմնան իբրև պարզապես հնչյուններ, իսկ դեռահասի գիտակցության մեջ կարմատավորվի այլ համոզմունքը:

Ա. Ս. Մակարենկոն հմտորեն օգտագործում էր երեխաների հոգեբանությունը՝ եթե գաղութի երեխան հանցավոր էր, ապա նրան ժամանակավորապես ազատում էին աշխատանքից, զրկում կոլեկտիվի հետ աշխատելու բերկրանքից: Պատժվողն սկզբում ուրախանում էր, բայց երբ նա տեսնում էր, թե ինչպես է կոլեկտիվը համերաշխորեն, կայտառորեն ու կատակելով աշխատում, իսկ ինքը կոլեկտիվից դուրս է մնացել, իրեն չեն վստահում աշխատել բոլորի հետ, դա նրա վրա այլ կերպ էր սկսում ազդել: Նման իրավիճակում դեռահասի գիտակցության մեջ անխուսափելիորեն կարմատավորվի այն միտքը, որն անհրաժեշտ ենք համարում

[3] «Բարոյագիտություն» առարկայի ծրագիր (Մարդ և հասարակություն. գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2013, N 5, էջ 3):

ձևակերպել՝ պատժում են անհաճո բանով, ուրեմն կոլեկտիվը աշխատելու իրավունքից զրկելը ինչ-որ անհաճո, անարժան բան է, հետևաբար, ինքը աշխատանքը շատ հրապուրիչ գործ է, որն առաջացնում է հարգանք, հասարակական ճանաչում:

Հոգեբանները հատուկ խնդիր են դրել՝ ուսումնասիրել դեռահասների բարոյական գիտակցության, նրանց բարոյական հասկացությունների և պատկերացումների էությունը: Հետազոտությունները ընդհանուր առմամբ ցույց են տվել դեռահասների բարոյական գիտակցության բարձր մակարդակ: Դեռահասների մեծ մասը ճիշտ է հասկանում իր տարիքին մատչելի բարոյական հասկացությունները:

Համոզմունքների և աշխարհայացքի ձևավորման հետ սերտորեն կապված ձևավորվում են նաև դեռահասների բարոյական իդեալները: Այդ իդեալները բավականաչափ խորն են, բովանդակալից, գործուն և ծառայում են որպես յուրատեսակ բարոյական չափանիշ, որին համապատասխանեցնում է իր վարքագիծը դեռահասը: Կրտսեր դեռահասի համար սովորաբար որպես իդեալ ծառայում է որևէ կոնկրետ մարդ, որի մեջ դեռահասը տեսնում է իր կողմից բարձր գնահատվող հատկությունների մարմնավորումը: Դրանք մեծ մասամբ ծնողներն են, ուսուցիչները, ընկերները, սիրած գրքերի կամ կինոնկարների հերոսները: Բարձր տարիքի դեռահասների համարորպես իդեալներ սկսում են հանդես գալ նաև ընդհանրացված կերպարներ որպես իդեալական որակների ամբողջություն:

Բազմաթիվ հետազոտությունները ցույց են տվել, որ դեռահասի այն բարոյական հասկացություններին ու համոզմունքները, որոնք ձևավորվում են տարերայնորեն, առանց գաղափարական ճիշտ ղեկավարման, սղալ ըմբռնվող փաստերի, գրքերի, կինոնկարների, մեծերի վարքի ինքնուրույն վերլուծության ազդեցությամբ, կարող են սղալ և անկատար լինել: Նման դեպքերում դեռահասը կարող է մոլորվել, երբեմն էլ հետևել մեր հոգուն ղորթ բարոյական սկզբունքների և դիրքորոշումների: Դեռահասության տարիքում, երբ մարդ ձևավորվում է որպես անձնավորություն, նրա համար կարևոր է իրեն որպես մեծահասակ զգալ, գիտակցել, որ ինքը կարող է հակադրվել մեծերի կամքին:

Դեռահասների բարոյական հասկացությունների էությունը հետազոտեց Լ. Ն. Դեսևը, որը պարզել է, որ դեռահասների կողմից բարոյական կատեգորիաների ըմբռնումը հաճախ կրում է մակերեսային ձևական բնույթ:

Այս բոլորը իրենից ներկայացնում է յուրատեսակ բարոյական հավատամք: Երբ հոգեբանները ծանոթացան վերը նշված կարծիքներն ու ունեցող դեռահասների բնութագրերին, կատարյալ ընդհանրություն գտան վարքի հետ, այսինքն՝ բարոյական գիտակցությունը «գերաճում է» վարքի, որոշում է վարքը: Ոչ ճիշտ գիտակցությունը պայմանավորում է ոչ ճիշտ վարքը:

Դեռահասների բարոյական հասկացությունների էությունը հետազոտեց Լ. Ն. Դևսը (Ա. Գ. Կովալյովի ղեկավարությամբ), որը պարզեց, որ դեռահասների կողմից բարոյական կատեգորիաների ըմբռնումը հաճախ կրում է մակերեսային, ձևական բնույթ:

Հոգեբանները ուսումնասիրել են մի կողմից դեռահասների մեջ ձևավորվող համոզմունքների, բարոյական գաղափարների, հասկացությունների, դիրքորոշումների և մյուս կողմից նրանց արարքների, գործողությունների, կոնկրետ վարքագծի միջև եղած հարաբերությունները: Ա. Ի. Մալիովանովը այդ տեսակետից դեռահասներին բաժանել է չորս խմբի.

1. դեռահասներ, որոնք իրենց վարքում ղեկավարվում են իրենց կողմից լավ գիտակցված դրական բարոյական նորմաներով և որոնց մոտ խոսքի և գործի միջև հակասություն չկա.

2. դեռահասներ, որոնց մոտ համընկնում է բարոյական հասկացությունների զարգացման ցածր մակարդակը և վարքը.

3. դեռահասների մի փոքր խումբ առանձնանում է վարքի բարոյական նորմաների իր քաջատեղյակությամբ, բայց իր համար անհրաժեշտ չի համարում վարվել ըստ այդ նորմաներին: Այդ դեռահասները դեմագոգներ են, երեսպաշտներ, երևույթ, որ տիպական չէ մեր դպրոցի համար, բայց այնուամենայնիվ, երբեմն հանդիպում են.

4. դեռահասներ, որոնք դեռևս չեն տեսնում, չեն հասկանում այն կապը, որ գոյություն ունի իրենց հայտնի կոմունիստական բարոյական պահանջների և իրենց առօրյա արարքների միջև: Նրանցից շատերը անբավարար են գիտակցում

բարոյական մի քանի կատեգորիաների էությունը: Սխալ ըմբռնելով բարոյական շատ հասկացություններ, ոչ ճիշտ հասկանալով ու ոչ ճիշտ գնահատելով անձնավորության առանձին որակներ, ձգտելով անկախության և ինքնուրույնության, փորձելով անշնորք ձևով դրսևորել իրենց կամքը, որոշ դեռահասներ երբեմն դիտավորյալ կերպով իրենց մեջ զարգացնում են այն հատկությունները, որոնք օբյեկտիվորեն բացասական են, և վերացնում են դրականները: Դաստիարակների խնդիրն է տակտով և հմտորեն հաղթահարել ոչ ճիշտ հայացքները, բացատրել գործի էությունը, ցրել դեռահասների մոլորությունները, բայց ոչ թե տաղտկալի հորդորներով ու չոր ձանձրալի խրատներով, այլ անկեղծ, սրտագին, բարեկամական զրույցներով:

Դեռահասն ընդունակ է հասկանալու փաստարկումը, համոզվելու նրա հիմնավորվածության մեջ. համաձայնելու բանական փաստարկներին: Մյուս կողմից, դեռահասի մեջ զարգացող քննադատական միտումները հաճախ նրան ստիպում են անվստահ և կանխակալ մոտեցում ցուցաբերել մեծերի փաստարկումների նկատմամբ, ժխտել նրանց փաստարկումները, հակադրվել նրանց: Ամեն ինչ կախված է դաստիարակի՝ այս կամ այն վիճակը այնպիսի պարզությամբ, դեռահասի համար համոզիչ և անվիճելի ձևով ներկայացնելու կարողությունից, որ բացառվի հակառակ ուղղությամբ գործելու ամեն մի հնարավորություն: Դեռահասը պետք է իրեն հաշիվ տա, որ չի կարելի չհամաձայնել մեծերի փաստարկումներին, քանի որ դա կնշանակի իրեն դնել հիմար դրության մեջ, իսկ որ՝ դեռահասը կհամաձայնի դրան:Դեռահասին շատ է դուր գալիս, որ մեծերը դիմում են իր բանականությանը, հաշվի են առնում իր հասկանալու դրանով իսկ բավական բարձր գնահատելով նրա մտածողական ընդունակությունները: Նրա մեջ ցանկություն է առաջանում արդարացնել այդ հույսերը, արժանի լինել նման վերաբերմունքի:

Գլխավորը, սակայն մնում է դեռահասի բարոյական ճիշտ փորձի կազմակերպումը, որի ընթացքում նա համոզվում է իր կողմից յուրացվող բարոյական նորմաների ճշմարտացիության և անվիճելիության և առօրյա կյանքում դրանց հետևելու անհրաժեշտության մեջ:

Բարոյական նորմերի, բարոյական զգացմունքների առանձնահատկությունները դեռահաս տարիքում:

Հոգեբանության մեջ բարոյական գիտակցություն ասելով ի նկատի ունենք մարդու գիտակցության մեջ բարոյական սկզբունքների ու նորմերի արտացոլումը, որոնք կարգավորում են մարդկանց փոխհարաբերությունները, հանրօգուտ աշխատանքի և հասարակության նկատմամբ նրանց վերաբերմունքը: Սակայն բարոյական հասկացությունների յուրացումը բարոյական գիտակցության ծագման ու զարգացման գործում կարևոր դեր կատարելով հանդերձ, ինքնըստինքյան դեռևս չի ապահովում բարոյական վարքագծի ձևավորումը: Հոգեբանական հետազոտությունները և մանկավարժության կուտակած փորձը ցույց են տալիս, որ երեխաները հաճախ լավ գիտեն բարոյական նորմերը, բայց իրենց վարքագծում դրանցով չեն ղեկավարվում: Իրերի այսպիսի վիճակը, որպես կանոն, այն կույր հավատի հետևանքն է, որ որոշ դաստիարակներ տարածում են բարոյական գիտելիքների նկատմամբ:

Որպեսզի բարոյական գիտելիքներն ու հասկացությունները համոզմունքներ դառնան, պետք է ամրապնդվեն վարքի դրդապատճառների համակարգում և դրանց համապատասխանող բարոյական սովորություններում:

Հույզերը լավագույն ներգործությունն են ունենում բարոյական բարձր զգացմունքների սովետական հայրենասիրության ու ինտերնացիոնալիզմի, սոցիալիստական հումանիզմի, պաչտքի, պատասխանատվոբության, ընկերության, պատվի, խղճի ձևավորման վրա: Բայց ինչպես բարոյական զգացմունքների, այնպես էլ բարոյական համոզմունքների ձևավորումը ավելի հաջող է ընթանում, երբ դրանք դպրոցականների կողմից յուրացվում ու զգացվում են գործունեության պրոցեսում: Թեկուզ մեկ անգամ իր կատարած բարոյական գործողության համար բավականություն զգալով, երեխան կզգտի կրկին ու կրկին անգամ ապրել այդ վիճակը: Երեխաների գործունեության նպատակասլաց կազմակերպումը, եթե այն հենվում է բարոյական հասկացությունների վրա և ներթափանցված է բարոյական հույզերով, հիմք է հանդիսանում բարոյական վարքագծի ձևավորման համար:

Բարոյական է այնպիսի վարքը, որ դետերմինացված է հասարակականորեն պայմանավորված բարոյական չափանիշներով ու հարաբերությունների որոշակի

սկզբունքներով և կարգավորվում է դրանց կողմից: Վարքի միավորը, որում իր դրսևորումն է գտնում այլ մարդկանց և հասարակության նկատմամբ երեխայի ունեցած վերաբերմունքը, արարքն է: Վարքի տարրեր հանդիսացող արարքներում, որոնք ունեն բարոյական դրդապատճառներ, ի հայտ է գալիս մարդու անձը, նրա որակներն ու պահանջմունքները:

Բարոյական վարքի ձևավորման համար պահանջվում է հատուկ ուշադրություն նվիրել բարոյական սովորությունների դաստիարակությունը, որոնցից են աշխատելու, ընկերական օնություն ցույց տալու և կենսականորեն կարևոր այլ սովորություններ, որոնք նպաստում են անձի բարոյական որակների զարգացմանը: Բարոյական սովորությունները սկզբում ձևավորվում են մեծերին ընդօրինակելու և նրանց պահանջների ազդեցության տակ, կոլեկտիվի հասարակական կարծիքի ներգործությամբ: Կոլեկտիվ գործունեության պրոցեսում, բարոյական սովորությունները աստիճանաբար դառնում են անձի պահանջմունքներ:

Անձի բարոյական ոլորտի ձևավորումը իրենից ներկայացնում է գիտակցության, վարքի, զգացմունքների ու սովորությունների զարգացման պրոցես: Այս պրոցեսը հատկապես հաջող է ընթանում դաստիարակության հատուկ կերպով կազմակերպված համակարգում, որտեղ ոչ միայն զուգորդվում են դպրոցականների բարոյական լուսավորումն ու պրակտիկ գործունեությունը, այլև հատկապես ծրագրավորվում և համաձայնեցվում են երեխաների միջև և կոլեկտիվի ու հասարակության հետ նրանց փոխհարաբերությունները: Այսպիսի պայմաններում երեխաները ոչ թե պարզապես բարոյական կանոններ են սովորում, այլև ակտիվ գործունեություն և փոխադարձ կախվածության ու պատասխանատվության հարաբերությունների ոլորտում բարոյական վարքի անձնական փորձ են կուտակում: Այս փորձի կազմի մեջ մտնող բարոյական սովորությունները աստիճանաբար դառնում են վարքի դրդապատճառներ և բարոյական համոզմունքներ: Երեխաների հասարակական վարքի ու փոխհարաբերությունների պրակտիկան բարոյական լուսավորության հետ մեկտեղ, իր հերթին անհրաժեշտ հիմք է դառնում բարոյական գիտակցության դրսևորման համար: Գիտակցելով բարոյական պահանջները, սեփական բարոյական իդեալներ ձևավորելով և դրանք վարքի դրդապատճառներ դարձնելով, երեխաները նվաճված այս դիրքերից սկսում են վերահիմաստավորել և

ընդհանրացնել իրենց փորձը: Բարոյական արժեքների գիտակցումն ու սիստեմավորումը բնորոշ են արդեն դեռահասության տարիքի համար: Իսկ ավագ դպրոցականին հատուկ է բարոյական համոզմունքների, կենսական նպատակների ու հեռանկարների հարաբերականորեն կայուն համակարգը:

Եզրակացություն

Ինչպես նշվել էր աշխատանքում դեռահասության փուլի սահմանը ընդգրկում է 14-15 տարեկանը: Կարելի է եզրակացնել, որ դեռահասի անձնավորության զարգացման ամենակարևոր պահերից մեկը ինքնագիտակցության ձևավորումն է, իրեն որպես անձնավորություն գիտակցելու պահանջմունքը: Այսինքն նրա մեջ առաջանում է հետաքրքրություն իր նկատմամբ, իր ներքին կյանքի նկատմամբ, իր սեփական անձնավորության արժանիքների նկատմամբ, ինքնագնահատման, իրեն ուրիշների հետ համեմատելու պահանջմունքը: Իմ կարծիքով դեռահասների ինքնագիտակցության զարգացումը սկսվում է իրենց վարքի գիտակցումից (այսինքն առանձին արարքների), այնուհետև՝ իրենց բարոյական որակների, բնավորության, իրենց ընդունակությունների գիտակցումից: Ընդ որում դեռահասների բարոյական լուսավորության համար կարևոր ուղի կարող է հանդիսանալ բարոյական թեմայով պատմությունը, որը կարող է իրագործվել միջին և բարձր դասարաններում ու նպաստել դպրոցականների իմացության հարստացմանը: Այսինքն դա հնարավորություն կտա դեռահասին բարոյական հասկացությունները ճիշտ ըմբռնել: Օրինակ՝ ի՞նչ է բարությունը, ի՞նչ է համեստությունը և այլն: Կարծում եմ, որ կարելի է դպրոցներում կազմակերպել բարոյական թեմայով բանավեճեր, որի համար նյութը կարող են լինել շրջապատող կյանքի առօրյան, հասարակության զարգացմանը խոչընդոտող պատճառները, սոցիալական անարդարությունները և այլն:

Ընդհանուր առմամբ բարոյական դաստիարակության նկատմամբ անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է:

Մարդու բարոյական զարգացումը շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում: Այն շարունակվող գործընթաց է, որին նպաստում են ուրիշ մարդկանց, հասարակության հետ անձի շփումներ, հաղորդակցումները, որոնք ներգործում են նրա գործողությունների, արարքների վրա, ձևավորում նրա անձը:

Պրակտիկայում անցկացրաց հետազոտության շնորհիվ ևս մեկ անգամ համոզվեցինք, որ Կրտսեր դպրոցականի տարիքը ձեռք բերած բարոյագիտության և կենսափորձի հիմքի վրա դեռահաս տարիում ավելի են կայունանում այնպիսի

հասկացություններ, ինչպիսիք են պարտքի ու պատասխանատվության, ազնվության, ընկերասիրության, հայրենասիրության և մարդասիրության զգացմունքները:

Նմանօրինակ զգացմունքներ ձևավորվում են առօրյա կյանքեւմ, ինչպես նաև ամենօրյա ուսանողական աշխատանքների հանձնարարությունները կատարելիս:Այդ հարցում կարևոր դեր է խաղում դասարանի կոլեկտիվը և հատկապես ուսուցիչը:

Կրտսեր դպրոցականի մոտ ձևավորելով բարոյական պատկերացումները և առաջացնելով դրանց համապատսխան ապրումներ, կարելի է սիստեմատիկ առատ կոլեկտիվում կիրառել եեխաների փոոիհարաբերությունների որոշակի ոճ:

Արդեն բարձր դասարններում ընդարձակվում ու խորանում են բարդ հասկացությունները, որոնք ապահովում են վարքի սկզբունքայնությունները:

Բարդ հասկացություններից ամենաբարդն ու հետաքրքիրը երկու սեռերի միջև առաջացող սիրո և համակրանքի զգացմունքն է:

Ընկերությունը և փոխադարձ շփումը համակրելի անձի հետ ավելի է ամրապնդում երկու սեռերի բարեկամությունը:

Եվ ի վերջո այն ամենը, որ մարդու վարքում առաջին հայացքից թվում է առանց պատճառի, ինքնաբերական տվյալ կոմկրոտ պայմաններից անկախ, կարող է հասկանալի լինի իբրև երբևէ ստեղծված և ամրապնդված կենսական սովորությունների կամ փորձի դրսևորում:

Գրականության ցանկ

1. Բարոյագիտություն» առարկայի ծրագիր (Մարդ և հասարակություն. գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2013, N 5, էջ 3):
2. Chang Lee Hoon. Revisiting the Values in Moral Education for Malaysian schools, Journal of Research, Policy & Practice of Teachers and Teacher Education, Vol. 3, No. 2, December 2013, p. 51
3. http://www.educationscotland.gov.uk/Images/CurriculumImpactReviewRME_tcm4-826574.pdf, p. 6.